

<b>ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2-90.01.06 «ՊԱՐԱՐՎԵՍ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ</b>	
<b>Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը</b>	2-90.01.06.02-4 «Դերասան՝ ժողովրդական համույթի»
<b>I. Դերը</b>	«Դերասան՝ ժողովրդական համույթի» որակավորմամբ մասնագետը՝ որպես համույթի պարող, հանդես է գալիս խմբապարով, զուգապարով, մենապարով տարբեր բեմահարթակներում (պարահրապարակ, համերգային դահլիճ, ակադեմիական բեմ): Կատարում է հայկական և տարբեր ազգերի ժողովրդական պարեր:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Պարային համույթում նախապատրաստական աշխատանքների կատարում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ըստ հանձնարարականի ծանոթանում է համույթի ծրագրային աշխատանքներին, աշխատում է պարի շարժումների կատարման, արտահայտչականության, երաժշտական և տեխնիկական առանձնահատկությունների յուրացման վրա: Ներգրավվում է տարբեր պարերի և բեմադրությունների մեջ:
<b>Կատարման չափանիշներ</b>	1. Ճիշտ է վերատադրում հատվածներ տվյալ համույթի ծրագրային աշխատանքներից: 2. Ցուցադրում է իր կատարողական հմտությունները, պարայնությունն ու երաժշտականությունը, դերասանի վարպետությունը: 3. Դրսևորում է խմբապարերում ներգրավվելու ունակություն:
<b>Խնդիրների բնագավառ 2. Աշխատանք պարուսույցի հետ</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ըստ հանձնարարականի՝ կատարում է պարուսույցի բոլոր մասնագիտական պահանջները, ենթարկվում է համույթի ներքին կանոնադրությանը:
<b>Կատարման չափանիշներ</b>	1. Ճիշտ է կատարում պարային էլեմենտները: 2. Հմուտ և ներդաշնակ է կատարում պարային շարժումները, բեմադրական առանձնահատկություններն ու պարուսուցի պահանջները: 3. Ճիշտ է վերարտադրում պարային նոր շարժումների կատարման ընթացքը, երաժշտականությունը, զգացմունքայնությունը, բեմական կուլտուրան: 4. Պահպանում է համույթի ներքին կանոնադրության պահանջները:
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական</b>	Պատասխանատու է իր, համույթի անդամների և ղեկավարների առջև, անսամբլային բեմադրությունների կատարման սահմանված ժամկետների և որակի ապահովման համար:

<b>պատասխանատվության շրջանակ/</b>	
<b>IV. Լեզուները</b>	Չայերեն - լավ Երկու օտար լեզու – բավարար (որակավորման պահանջներին համապատասխան)
<b>V. Համակարգիչը</b>	- MS Word - Internet
<b>VI. Գիտելիքները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Պետք է տիրապետի պարային հիմնական գիտելիքներին (դասական պար, հայկական պար, ժողբնորոշ պար):</li> <li>2. Պետք է լիարժեք տիրապետի մասնագիտական տերմինաբանությանը:</li> <li>3. Պետք է իմանա համույթային աշխատանքի բոլոր առանձնահատկությունները:</li> <li>4. Պետք է տիրապետի երաժշտական հիմնական գիտելիքներին:</li> </ol>
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ունենա մասնագիտությանը համապատասխան պարային տվյալներ՝ արտաքին տեսք, ճկունություն, պարայնություն, լսողություն, ռիթմի զգացողություն:</li> <li>2. Տիրապետի տարբեր պարաոճերին և հմտորեն կերպարանափոխվի տարբեր բեմադրությունների ժամանակ:</li> <li>3. Ունենա համույթում աշխատելու կարողություն և անհատականություն:</li> <li>4. Տիրապետի իմպրովիզացիայի հիմունքներին:</li> </ol>
<b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b>	<p>Պետք է ունենա աշխատասիրություն, նվիրվածություն, կարգապահություն, ազնվություն, պատասխանատվություն, ինքնապահանջկոտություն, ստեղծագործական կատարելագործման և նորարարության ձգտում, կոլեգիալ հարաբերությունների ճկունություն:</p> <p>Լինի մտածող, պարկեշտ, անկաշկանդ, հաղորդակցվող, մաքրասեր, հարգալից, նորարար, ընկերասեր:</p>